

նի. ուստի կը խնդրէ սուլթանական հրամանագիր մը, որով Աղթամարի կաթողիկոսական իրաւասութեան ենթարկուին այդ երկիրները, որովհետեւ Աղթամար՝ Օսմանեան իշխանութեան ներքեւ կը գտնուի:

Սուլթան Մուհամմէտ կու տայ խընդըրուած ֆերմանը, որպէս զի Աղթամարի կաթողիկոսը տիրէ այդ վիճակներուն վրայ: Երբ զայս կը լսէ Յակոբ կաթողիկոս, նաև ինք խնդրագիր մը կը գրէ Սուլթանին, փաստելով թէ «ի բնէ» էջմիածնի վիճակներ են վերոյիշեալ նահանգները: Սուլթան Մուհամմէտ վերահասու ըլլալով ճշմարտութեան, նոր ֆերման մը կը հանէ, հրամայելով որ նոյն վիճակները վերագործուին էջմիածնի, և ոչ ոք կարենայ ձեռնամուխ ըլլալ անոնց (1661):

Սակայն Մարտիրոս կաթողիկոս կաշառքով կը դիմէ Վանի Մովպետին և մեծամեծներուն, ըսելով. «Ես այսքան դրամ ծախսած եմ և ֆերման հանած եմ. այժմ վիճակներէս ևս կը զրկուիմ»:

Խնդիրը դատաստանի կ'ենթարկուի Յակոբ կաթողիկոսին գիտակցութեամբ և վանի հայ մեծամեծներուն խորհրդակցութեամբ, տեղւոյն Առաջնորդը, Պօղոս Վարդապետ, գործակատար կը նշանակուի էջմիածնի կողմէ: Սա կը յաջողի դատական գործողութիւնը խափանել, 1848 դահեկանի փոխարէն՝ Մարտիրոս կաթողիկոսէն հետեւեալ գրաւոր յայտարարութիւնն առ-